14834

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 17 » 11 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0174-22

Ձեռնարկողը՝ ***«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՅԹՈՒՆ-ՍԱՌՅԱՐԱՆ» ԲԲԸ***
ք. Երևան, Դավիթ Անհաղթ Փ./6 Մալաթիա-Սեբաստիա

Գործունեությունը՝ ***Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դ. Անհաղթ 6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի թաղամասի շրջակա միջավայրի վրա աղդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի՝ պարտականությունները կատարող Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0174-22

«14» 11 **2022թ**

Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դ. Անհաղթ 6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի թաղամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԵՐԵՎԱՆԻ ԶԵՅԹՈՒՆ-ՍԱՌՅԱՐԱՆ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ներածական մաս. Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաբնակարան բնակելի թաղամաս: Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դ. Անհաղթ 6 հասցեում:

Համաձայն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ առևտրի կենտրոնի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 20000ք.մ, ուստի սույն նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

Բազմաբնակարան բնակելի թաղամասի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Հողամասի մակերեսը կազմում է 2.0 հա՝ կադաստրային ծածկագիր՝ 01-012-0323-0004:

Նախագիծը կատարվել է Երևանի քաղաքապետարանի կողմից 06.07.2021թ. տրված՝ N01/18–07/2290-Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքի եվ անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեի կողմից 27.01.2021թ. տրված՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թ. 27012021-01-0106 վկայականի հիման վրա,

Համաձայն հայտում կցված Երևանի քաղաքապետի 2021 թվականի հուլիսի 6-ի №2290-Ա որոշման հողամասի նպատակային նշանակությունը փոփոխվում է բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ապամոնտաժման նախագիծը կատարված է Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթի փողոց թիվ 6 հասցեում գտնվող, արտադրական նշանակության շինությունների սեփականատեր՝ «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՅԹՈՒՆ-ՍԱՌՅԱՐԱՆ» ԲԲԸ-ի պատվերով:

Շինությունների ապամոնտաժման նախագիծ կատարելու համար հիմք են հանդիսացել՝ սեփականատիրոջ հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման № 27012021-01-0106 վկայականը, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 01-012- 0323-0004:

Նկարագրական մաս. Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դ. Անհաղթ 6 հասցեում, Դավիթ Անհաղթ և Կարապետ ՈՒլնեցի փողոցների խաչմերուկի հարավ-արևելյան անկյունում:

Հողատարածքի հարևանությամբ գտնվում են Դ. Անհաղթի և Կ. ՈՒլնեցու փողոցները, հասարակական և բազմաբնակարան բնակլեի շենքեր: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Հողատարածքը ամբողջովին ասֆալտապատված է, հողի բերի շերտը բացակայում է:

Հողամասը ծանրաբեռնված է հասարակական և օժանդակ քանդման ենթակա շինություններով:

Խանութ սրահը «ԿԵՐԱՄԱ ՄԱՐՐԱՑԻ» 2586,0ք.մ, պարիսպ 113,02 ք.մ շինարարական աշխատանքների 1-ին փուլի իրականացման ընթացքում կպահպանվեն, իսկ երկրորդ փուլի ընթացքում կապամոնտաժվեն:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, նախատեսվող տարածքում բացակայում են:

Գրունտային ջրերը հորատանցքերով մինչև 26.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 50.0 մետրից խորը:

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

Նախագծումը եվ շինարարությունը ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի կատարվելու են փուլային եղանակով՝ առաջին փուլում նախատեսվում է նախագծել եվ կառուցապատել չորս շենքերից երկուսը և նրանց բակի տակ գտնվող ստորգետնյա, երկհարկանի ավտոհանգրվանը, որոնք կզբաղացնեն տարածքի հյուսիս-արևմտյան՝ Դավիթ Անհաղթ եվ Կարապետ ՈՒլնեցի փողոցներին հարող հատվածը, երկրորդ փուլում նախագծված եվ կառուցվելիք հաջորդ երկու շենքերը, եվ նույնատիպ ստորգետնյա ավտոհանգրվանը կզբաղեցնեն տարածքի հարավ-արեվելյան հատվածը:

Առաջին փուլում նախագծվել են երկու շենք իրենց ավտոհանգրվանով: Առաջին շենքը անկյունային դասավորությամբ կառույց է, որը հակասեյսմիկ կարաններով բաժանված է լինելու երեք մասնաշենքերի «ա», »բ», »ա/բ» և տեղադրվելու է երկու փողոցների խաչմերուկին կից հատվածում, իսկ երկրորդը «գ» մասնաշենքը կկառուցվի Դավիթ Անհաղթ փողոցին զուգահեռ՝ առաջին շենքի եվ «Կերամա մարացցի» խանութ-սրահի միջեվ ընկած տարածքում: «գ» մասնաշենքի շարունակությունը կկազի երկրորդ փուլում կառուցվելիք երրորդ շենքը «դ» մասնաշենք, որը կտեղադրվի, նույնպես, Դավիթ Անհաղթ փողոցին զուգահեռ՝ «Կերամա Մարացցի» խանութ-սրահի տեղում՝ վերջինիս քանդումից հետո: Վերջին՝ չորրորդ շենքը «ե»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՀՀ ԵՐԵՎԱՆ Ք. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER - ОКРУЖАЮЩАЯ СРЕДА ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОБЩЕСТВЕННОЕ ДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ - ГНО * РА ЕРЕВАН Г. * 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

մասնաշենք 2-րդ փուլ/ կտեղադրվի «դ» մասնաշենքից հարավ եվ կեզրափակի համալիրի տարածքը:

Բոլոր մասնաշենքերի առաջին երկու վերգետնյա հարկերը նախատեսված են որպես հասարակական տարածքներ, իսկ երրորդից տասնհինգերորդ հարկերը՝ բնակելի, «ա/բ» մասնաշենքերը կունենան երկու ստորգետնյա նկուղային եվ երկու վերգետնյա հասարակական նշանակության հարկեր, որոնցից առաջին ստորգետնյա հարկում /-4.350/1290.40/նիշ/ տեղակայվելու է ամբողջ թաղամասին սպասարկող էլեկտրասնուցման ենթակայանը:

«ա» «ա/բ» եվ «բ» մասնաշենքերի ստորին նկուղային հարկը /-7.650/1287.10/նիշ/ անհրաժեշտության դեպքում ծառայելու է որպես ապաստարան: «ա» մասնաշենքի ±0.000 նիշից ներքեվ գտնվող հարկը, որը մյուս մասնաշենքերի համար ստորգետնյա է: Կարապետ Ուլնեցու փողոցի թեքության շնորհիվ հնարավորություն է ստացել օգտագործվել որպես լիարժեք հարկ՝ փողոցի կողմից առանձին մուտքով՝ աստիճաններով եվ թեքահարթակով:

Շենքերի հասարակական հարկերի մուտքերը տրված են Դավիթ Անհաղթ եվ Կարապետ Ուլնեցի փողոցների կողմից՝ իրնց աստիճաններով եվ թեքահարթակներով: Բնակիչների համար մուտքերը՝ յուրաքանչյուրն իր առանձնացված չծխացվող աստիճանավանդակով եվ մարդատար ու բեռնա-մարդատար վերելակներով տեղադրված կլինեն բակի կողմից: «ա», «գ», «դ» եվ «ե» մասնաշենքերը կունենան յուրաքանչյուրը երկու մուտք, իսկ «բ» մասնաշենքը մեկ մուտք: «ա», «բ», «գ», «դ» եվ «ե» մասնաշենքերի երրորդից տասներկոիերորդ հարկերում տեղադրված կլինեն համապատասխանաբար 10, 7, 14, 12 եվ 12 բնակարան, իսկ տասներեքերորդից տասնհինգերորդ հարկերում կլինի 9, 6, 12, 10 եվ 10 բնակարան: Բնակարանները նախագծված են մեկից երեք ննջարանով, սակայն հատակագծային լուծումները հնարավորություն կտան տալիս միացնել երկու բնակարան եվ ստանալ ավելի մեծ բնակելի մակերես: Բնակարաններում նախատեսված են հատուկ տեղեր օդորակիչների եվ ջրատաքացուցիչների համար:

Ավտոմեքենաների մուտքը դեպի բակ ապահովված են լինելու Դավիթ Անհաղթ փողոցի կողմից, «բ» եվ «գ» մասնաշենքերի եվ «գ» մասնաշենքի ու «Կերամա Մարացցի» խանութ-սրահի շենքի միջև նոր կառուցվելիք ճանապարհներով:

Ավտոմեքենքների մոտեցումը շենքերի մուտքերին իրականացվելու է բակի շրջագծով անցնող 4,5մ լայնությամբ, միակողմանի ավտոճանապարհով:

Բակի տարածքի տակ՝ թաղամասի բնակիչների մեքենաների համար, նախատեսված է լինելու ստորգետնյա երկհարկանի երկու ավտոհանգրվան: 196 ավտոկայանատեղով N1 ավտոհանգրվանը սպասարկելու է «ա», «բ», «գ» մասնաշենքերին: «գ» mասնաշենքի երկու ստորգետնյա հարկերը եվ «բ» մասնաշենքի 1290,40 նիշի վրա գտնվող հարկը նույնպես նախատեսվելու են մեքենաների կայանման համար են եվ N1 ավտոհանգրվանի հետ միասին ընդհանուր ապահովվելու են 260 ավտոկայանատեղ: Բնակելի հարկերի եվ ավտոհանգրվանի կապը իրականացվելու է մուտքերի աստիճանավանդակներով և վերելակներով, որոնք միացված են լինելու ավտոհանգրվանի հարկերին հակահրդեհային անցախցերով /օդի դիմհարով/: Ավտոհանգրվանի վերին հարկը՝ նիշերի տարբերության պատճառով, կմիանա «ա» եվ «բ» մասնաշենքերին թեքահարթակներով, որոնք միաժամանակ կծառայեն որպես մուտք սակավաշարժ հնարավորություններով բնակիչների համար: Ավտոհանգրվանի յուրաքանչյուր հարկաբաժին կունենա առանձին մուտք, որոնց մոտեցումները կկազմակերպվեն Ուլնեցի փողոցի կողմից նախատեսված նոր ավտոճանապարհից: Վերջինս կնախատեսվի թաղամասի սպասարկման համար, կունենա 6մ լայնություն, կանցնի տարածքի հարավային սահմանին զուգահեռ, ապա «գ»մասնաշենքի եվ «Կերամա Մարացցի» խանութ-սրահի միջև նախատեսված ճանապարհով կմիանա Դավիթ Անհաղթ փողոցին:

N2 ավտոհանգրվանն կունենա 196 ավտոկայանատեղ եվ կսպասարիկ «դ» եվ «ե» մասնաշենքերին:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Երկու ավտոհանգրվանների տարածքները հակահրդեհային միջնորմներով եվ դարպասներով բաժվնված կլինեն հակահրդեհային մասնաբաժինների: Ավտոհանգրվանների տանիքները ծառայելու են որպես հանգստյան գոտի բնակիչների համար՝ կանաչապատված տարածքներով, ծաղկանոցներով, ճեմուղիներով, նստարաններով, երեխաների համար խաղահրապարակներով:

Շինարարության ընթացքում շենքերի տեղադրումը եվ կառուցումը հեշտացնելու պատակով ամեն շենքի առանցքների նշահարումը կատարվել է առանձին՝ անհատական համարակալումով, չնայած դրան «ա», «ա/բ», «բ» եվ «գ» մասնաշենքերի որոշ առանցքներ համընկնում են դրանով ապահովելով շենքերի փոխադարձ կապը:

Մասնաշենքերի համար որպես հարաբերական ± 0.000 նիշ ընդունված է առաջին հասարակական հարկերի մաքուր հատակի նիշը: Դավիթ Անհաղթ եվ Կարապետ Ուլնեցի փողոցների թեքությունների հետ կապված «ա», «բ» եվ «ա/բ» մասնաշենքերի համար ±0.000 նիշը համապատասխանում է 1290,40 բացարձակ նիշին, «գ» մասնաշենքի եվ N1 ավտոհանգրվանի համար՝ 1297,00 բացարձակ նիշին, «դ», «ե» մասնաշենքերի եվ N2 ավտոհանգրվանի համար՝ 1297,00 բացարձակ նիշին:

Շենքերի արտաքին պատերը հասարակական հարկերում կերեսապատվեն բազալտե եվ տրավերտինե սալիկներով, իսկ բնակելի հարկերը՝ այլումինե ուղղաձիգ եվ հորիզոնական հենարանների վրա կախված, սպիտակ գույնի, թեթեվ, տրավերտինե սալիկներով, մասնաշենքերի տանիքները հարթ են՝ ներքին կազմակերպված ջրահեռացումով:

«Ա», «Ա/Բ» և «Բ» մասնաշենքերի նկուղային հարկը -7.65 նիշ 1343.0ք.մ մակերեսով նախատեսված է անհրաժեշտության դեպքում որպես ապաստարան ծառայելու համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ.

- ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍ - 20000 ք.մ
- ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔ 8204.3 – ք.մ
- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍՆԵՐ – 6607.1 ք.մ
- ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ - 5188.6 ք.մ
- ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ – 703 հատ

1-ին ՓՈՒԼ ՇԻՆ ՄԱԿԵՐԵՍ.

- ՎԵՐԳԵՏ. 38874.6 մ^2
- ՍՏՈՐԳԵՏ. 9574.5 մ^2

2-ՐԴ ՓՈՒԼ ՇԻՆ ՄԱԿԵՐԵՍ.

- ՎԵՐԳԵՏ. 48706.4 մ^2
- ՍՏՈՐԳԵՏ. 1410 3.8 մ^2

ԸՆԴ. 111259.3 մ^2

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանալու վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրվող ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան:

Բազմաբնակարան բնակելի թաղամասիի էլեկտրամատակարարումն հնարավոր կլինի իրականացնել նոր կառուցվող ՏԵ 0.4կՎ 1-ին և 2-րդ հատորներից համապատասխան կտրվածքի հաղորդմա գծերով՝ տեխնիկական պայմաններին համապատասխան:

Բազմաբնակարան բնակելի թաղամսի գազամատակարամն հնարավոր է իրականացնել Երևան 1 ԳԲԿ-ն Dպ-700 կողմնատար-գազատարի 5.9 կմ-ից՝ տեխնիկական պայմաններին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ: Տարածքում նախատեսվում է տնկել.

- Թղկի սրտատերեվ կարմիր- 86 հատ
- Գնդաձեվ իլենի - 34 հատ
- Գնդաձեվ թույա- 28 հատ
- Սակուռա- 5 հատ
- Բարբարիս - 26 հատ
- Ասպիրակ - 36 հատ
- Ֆորզիցիա - 31 հատ
- Խենոմելիս - 45 հատ
- Սամշիտ - 119 գծմ
- Եղևնի կովկասյան – 10 հատ
- Թզուկ վարդեր-138մ^2
- Սիզամարգ – 8204.3մ^2

Կանաչապատ տարածքների ոռոգման ջուրը կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք են՝

- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում,
- դիզելային վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Շրջակա միջավայրի վրա թվարկված աշխատանքներից առաջացող հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու, մեղմելու նպատակով նախատեսված են բնապահպանական մի շարք միջոցառումներ.

1. Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատում,
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության,
- շինարարական աշխատանքների/ փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի և կարգաորման

իրականացում, պարբերաար ստուգում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխման իրականացում փակ ծածկով մեքենաներով.
- շինհրապարակից դուրս գալուց առաջ շինտեխնիկայի անվադողերի լվացում,
- սորուն նյութերի պահեստները ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկում, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը միավորում մեկ բակային ցանցում և միացում սելավային ջրացանցին,
- կանաչապատ տարածքների ոռոգման իրականացում ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

3. Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.
- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ ապահովվում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար ավազ կամ մանրախիճ տեղադրում: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի հնարավոր արտահոսք, ապա փռված ավազի կամ մանրախիճի տեղափոխում համապատասխան աղբավայր և այն փոխարինում նորով,
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքի բարեկարգում և մաքրում շինաղբից:

Շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա թվարկված հնարավոր բացասական ազդեցություններից բացի հնարավոր են նաև արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, աշխատողների վնասվածքներ, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն, որոնց ազդեցությունների հնարավոր բացառման և նվազեցման համար ևս նախատեսվում են մի շարք միջոցառումները՝ մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողների, այդ թվում նաև վարորդների, հրահանգավորման անցկացում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհների և անցումների միշտ ազատ լինելու ապահովում, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակների տեղադրում, հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, բոլոր աշխատողներին անհատական պաշտպանության միջոցներով ապահում և մի շարք այլ միջոցառումներ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակում շահագործման ապահովում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի

շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի դրանց աղմուկի մակարդակին:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝

- շինարարական աղբ, այդ թվում նաև քանդման աշխատանքներից առաջացած՝ /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 1400մ^3,
- տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ /ծածկագիրը՝ 9120040001 00 4/՝ 0.7 տ/տարի,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ /ծածկագիրը 31401100 08 09 5/՝ 28112 մ^3

Շինարարական աղբը ամբողջությամ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմահարկ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 1750 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքները կատարվելու է պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շին. հրապարակը կազմակերպելիս կղեկավարվի քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կկրի անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Պատճառաբանական մաս. օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Արտակարգ իրավիճակների, Առողջապահության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
4. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել և իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանները:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը:
Շինարարության ընթացքում և աշխատանքների ավարտից հետո, որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝
- շինհրապարակի տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ, տեղադրել մուտք գործող արգելող նշաններ,
- նախատեսվող գործունեության տարածքում առկա «ԿԵՐԱՄԱ ՄԱՐՐԱՑԻ» խանութ սրահի՝ մինչ 2-րդ փուլում նախատեսվող քանդման/ապամոնտաժման աշխատանքների իրականացնելը ապահովել անվտանգության միջոցառումներ, սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ, համապատասխան նշաններով, հետիոտնի համար նախատեսել համապատասխան անցուղի,
- ապահովել և իրականացնել ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել, հնարավորինս բերելով սկզբնական վիճակի,
- ամբողջ շինարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից,

- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,
- շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից չի առաջանա ջրի արտահոսք,
- շինհրապարակից ելքի ժամանակ անհրաժեշտ է տեխնիկական միջոցների անվադողերի լվացում,
- տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի,
- ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականություն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը, կանաչապատումը իրականցնել տարածի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային տեսակներով, ձեռնարկել տնկված թփերի, ծառերի, խոտածածկի պահպանում և մոնիտորինգ բուսականության բարձր աճն ապահովելու համար, կպչողականություն չապահովող ծառատեսակները փոխարինել նորերով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԵՅԹՈՒՆ-ՍԱՌՅԱՐԱՆ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դ. Անհաղթ 6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի թաղամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Նելլի Նասիբյան